

Միևուսներ

Տրված է 1-ից N թվերի ինչ-որ դասավորություն: Հարկավոր է որոշ թվերի առաջ միևուս նշան դնել այնպես, որ բոլոր թվերի գումարը լինի 0:

Մուտքը

Առաջին տողում տրված է N ($1 \leq N \leq 100\ 000$) ամբողջ թիվը: Հաջորդ N տողերից յուրաքանչյուրում տրված է մի ամբողջ թիվ: Երաշխավորվում է, որ տրված են 1-ից N բոլոր թվերը և, որ յուրաքանչյուր թիվ հանդիպում է ճիշտ մեկ անգամ:

Ելքը

Առաջին տողում պետք է արտածել NO, եթե հնարավոր չէ անհրաժեշտ ձևով դնել նշանները, հակառակ դեպքում պետք է արտածել YES: Դրական պատասխանի դեպքում պետք է արտածել ևս մեկ տող, որը պետք է պարունակի մուտքի թվերի նշանները (տե՛ս օրինակը): Մի քանի լուծումների հնարավորության դեպքում բավական է արտածել նրանցից մեկը:

Օրինակներ

Մուտքը.

4
1
3
2
4

Ելքը.

YES
+--+

Մուտքը.

2
1
2

Ելքը.

NO